«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱՀԳԵՆ ԱՌԱՔԻՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի

2023-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Դպրոցի տնօրենի պաշտոնի հավակնորդ Աննա Զուլոյան

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ

1) ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Կրթական կարիքների նկարագրությունը
1.2 Համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին
1.3 Համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքների հնարավորություններին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին

2) ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ. ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ (Զև 1)

2.1 Հաստատության շենքային պայմանների վերլուծություն
2.2 Հաստատության նյութատեխնիկական բազայի վերլուծություն
2.3 Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծություն
2.4 Հաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ
2.5 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացումը
2.6 Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների եվ նորարարությունների ներկայացումը
2.7 Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծությունը
2.8 Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծությունը
2.9 Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծությունը
2.10 Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը

3) ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ (Զև 2)

- Զարգացման ծրագրի նպատակը , խնդիրները
- Զարգացման ծրագրի ակնկալվող արդյունքները
- Զարգացման ծրագրի ֆինանսավորման աղբյուրները
- Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունները և միջոցառումները
- Զարգացման ծրագրի կատարման պատասխանատուները
- Զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատման չափանիշները
- Զարգացման ծրագրի իրականացման ռիսկերը
- Զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները

4) ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5) ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

6) ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ

«Հայե՛ր մայր հայրենիքի ու բոլոր երկրների,

Մի՛ վախեցեք անցողիկ դժվարություններից ու նեղություններից,
Մի՛ վախեցեք պատասխանատվություն ստանձնելուց, ձեր պարտքը անսակարկ կատարելուց»

ԱՀԿ Վազգեն Ա

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ «Վանաձորի Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի անվան թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի սույն ծրագիրը մշակված է պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափի պահանջներին համապատասխան (ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022թ. սեպտեմբերի 22-ի N35-Ն հրաման):

Ինչպես նաև դպրոցի զարգացման ծրագրում (այսուհետ՝ ԴԶԾ) ներկայացված են պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հականորդի զարգացման ծրագրի գնահատման չափանիշներով սահմանված բոլոր բնութագրիչները:

ԴԶԾ-ի իրավական հիմքերն են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Լեզվի մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Գնումների մասին», «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքները, ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը, կրթության բնագավառը կարգավորող հարկային օրենսդրությունը, ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը, հանրակրթության պետական չափորոշիչը, ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշները և իրականացման կարգը, հանրակրթական ուսումնական հաստատության կառավարմանը վերաբերող կրթության կառավարման լիազոր մարմնի համապատասխան նորմատիվ ակտերը և այլ փաստաթղթեր:

1) ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ԴՊՐՈՑԻ ՀԻՆ ՏԵՍՔԸ

ԴՊՐՈՑԻ ՆՈՐ ՏԵՍՔԸ

ԴՊՐՈՑԻ ՄՈՒՏՔԸ

Դեռևս **1931թ.** քաղաքի տարբեր դպրոցներից առանձնացվել են լավ սովորող աշակերտներ և ստեղծվել է Օրինակելի դպրոց, որը տեղակայված է եղել Կիրովականի երկաթգծի կայարանի մոտ գտնվող միհարկանի շենքում:

1935թ. պետականորեն կատարվել է գործող դպրոցների համարակալում: Այդ ընթացքում **Մյասնիկյան 10** հասցեում կառուցվել էր դպրոցի նոր շենքը: **1937թ.** Օրինակելի դպրոցը տեղափոխվել է նորակառույց շենք, անվանակոչվել Սերգեյ Միրոնովիչ Կիրովի անունով, և **1939թ.** Ս.Մ. Կիրովի անվան միջնակարգ դպրոցը տալիս է իր առաջին շրջանավարտները: Հայրենական Մեծ պատերազմի տարիներին դպրոցի շենքը վերածվել է հոսպիտալի: Պատերազմի ավարտից հետո մասնաշենքը վերադարձվում է դպրոցին: Դպրոցն, իր առաքելությանը հավատարիմ, շարունակում է արարելը՝ կրթելն ու դաստիարակելը:

1995թ. դպրոցը վերանվանվեց **Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի** անունով:

1996թ. Վանաձորի թիվ 1 դպրոցի բազայի վրա ստեղծվեց կրթահամալիր, որը միավորում ու ներառում էր նախակրթարան, կրտսեր, միջին, ավագ, մշակույթի, ֆիզկուլտուրայի և սպորտի դպրոցներ, վարժարան (հումանիտար, ֆիզմաթ, իրավաբանական, սպորտի, օրիորդաց, գթության քույրերի նախամասնագիտական ծրագրեր իրականացնող ավագ դպրոցի դասարաններով): Դպրոցն հիմնանորոգվել է **2001թ**. -ին:

Տարիներ անց, որպես կրթահամալիր կառուցված մասնաշենքերում գործող միջնակարգ դպրոցը դարձավ հիմնական:

Ամենամյա մասնակի վերանորոգման աշխատանքներն ու հետևողականությունը հնարավորություն են տալիս մինչ օրս ունենալ բարեկարգ շենքային պայմաններ:

*Դպրոցն իրավունք ունի իրականացնելու տարրական ընդհանուր (**լիցենզիա Ա.0481**) և հիմնական ընդհանուր (**լիցենզիա Ա.0471**) կրթական գործունեություն:*

Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի տրման ամսաթիվը և համարը՝ N 04092023-06-0050:

Հասցե՝ համայնք Վանաձոր, քաղաք Վանաձոր, Ա. Մյասնիկյան 10/1
Էլ. հասցե՝ vanadzor1@schools.am
Հեռախոս՝ +322 24368

Վանաձորի Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի անվան թիվ 1 հիմնական դպրոցի ***առաքելությունն է.***

- ✓ *ձևավորել կրթական առողջ և մոտիվացնող միջավայր, ապահովելով սովորողների հավասար, շարունակական, մատչելի և յուրաքանչյուրին համապատասխան կրթություն,*
- ✓ *ապահովել յուրաքանչյուր սովորողի որակյալ կրթություն ստանալու իրավունքը,*
- ✓ *ձևավորել տարբեր մարտահրավերների պատրաստ բազմակողմանի զարգացած, ինքնակողմնորոշվող անհատներ*
- ✓ *սովորողների մի շարք կոմպետենցիաների ձևավորում և զարգացում , որպես հասարակության լիարժեք անդամներ,*
- ✓ *մարդկային արժանապատվության պահպանումը:*

Մեր նպատակն է՝

- ➢ *սովորողներից յուրաքանչյուրի համար ստեղծել իր կարողությունները առավելագույնս բացահայտելու հնարավորություն, որն էլ հնարավորություն կտա ունենալ կրթված, նախաձեռնող, նորարար, իրազեկ ու ինքնավստահ քաղաքացի,*
- ➢ *իրականացնել չափորոշչահեն կրթություն,*
- ➢ *ապահովել սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացումը*
- ➢ *ապահովել ուսուցիչների ազատ, ստեղծագործելու և ինքնակրթվելու համար համապատասխան միջավայր,*
- ➢ *արժևորել և բարձրացնել ուսուցչի դերը հասարակության շրջանում,*
- ➢ *ապահովել բռնությունից, հալածանքից զերծ միջավայր, նպաստելով սովորողների բարոյահոգեբանական առողջ պայմաններ:*

Անձնակազմը ներկա պահին կազմված է 67 հոգուց, որից.

- վարչական աշխատողներ՝ 3,
- ուսուցիչներ՝ 38,
- հաստիքային մանկավարժներ՝ 10,
- ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմ՝ 16:

Սովորողների նախատեսված սահմանային թիվը 629 է:

Ներկայումս դպրոցում սովորում է 629 աշակերտ:

1.1 ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ «Վանաձորի Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի անվան թիվ 1 հիմնական դպրոց»-ը միտված է ձևավորելու 21-րդ դարի պահանջների համապատասխան ինքնուրույն մտածող, ժամանակին համընթաց քայլող, ստեղծագործող, մարդասեր, կրթված, հայրենասեր անհատներ, ովքեր նորարար են և մրցունակ:

«ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի անվան թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կրթական կարիքներն ունեն հետևյալ ուղղվածությունները.

- *Մերունդների կրթություն և դաստիարակություն՝ համապատասխան տարբեր մարտահրավերներին*
- *Բազմակարծիք, ներառական և մասնակցային կրթական միջավայրի ապահովում:*
- *Ցանկացած բնույթի բուլինգի կանխարգելում և վերացում:*

- *Չափորոշչահեն կրթության ապահովում՝ կարևորելով ոչ միայն գիտելիքը, այլև՝ կարողությունակությունները:*
- *Յուրաքանչյուր սովորողի ստեղծագործական, քննադատական մտածողության, անհատական առանձնահատկությունների զարգացմանն ուղղված կրթական միջավայրի ապահովում:*
- *Սեփական և համաշխարհային մշակութային կյանքին ինտեգրված քաղաքացիների ձևավորումը, ովքեր ունակ կլինեն դիմագրավելու ժամանակակից մարտահրավերներին և կկարողանան սեփական ավանդը ներդնել հայկական մշակույթի զարգացման և համաշխարհային հարթակներում այն ներկայացնելու գործին:*
- *Տեղեկատվական բարձր տեխնոլոգիաների կիրառումը դարձնել ամենօրյա կրթության մաս:*
- *Ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթություն ստանալու հավասար իրավունքը:*
- *Կոմպետենտ ուսուցիչների գործունեություն*

1.2 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻՆ

«ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի անվան թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը իր գործունեությունը ծավալում է պետության կրթական քաղաքականության միտումներին համապատասխան, որը սահմանված է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով և առաջնորդվում է ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ:

Ըստ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի՝

- Հայաստանի Հանրապետությունը հռչակում և երաշխավորում է հանրակրթության բնագավառի զարգացումը՝ որպես անհատի և հասարակության անվտանգության և կայուն զարգացման ապահովման, հայ ինքնության պահպանման կարևոր երաշխիք:

- Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:
- Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության ժողովրդավարական և աշխարհիկ բնույթը:
- Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է:

Զարգացման ծրագրի հիմքում ընկած է պետական կրթական կարիքներին և պահանջներին համապատասխան իրականացնել սովորողների որակյալ կրթությունն ու դաստիարակությունը:

Այժմ կրթության քաղաքականությունը միտված է համակարգային փոփոխություններ կատարել սովորողների ուսումնական գործընթացի կազմակերպման, կրթության նպատակների և վերջնարդյունքների ապահովման հարցերում: Դրանով պայմանավորված ներդրվում են նոր ընդհանուր և առարկայական չափորոշիչներն ու ծրագրերը: Հետևաբար դպրոցը պետք է կարողանա հնարավորինս արդյունավետ և արագ ինտեգրվել այդ քաղաքականության իրականացման գործում՝ նպաստելով համակարգային փոփոխություններին: Այսօր կարողունակություններով օժտված հասարակություն ապահովելու հարցը դարձել է անխուսափելի և անհրաժեշտ պայման համաշխարհային գլոբալ և ՀՀ լոկալ իրողությունների համատեքստում:

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի անվան թիվ 1 հիմնական դպրոցը միշտ առաջնորդվել է պետական քաղաքականության միտումներին համապատասխան գործունեության ծավալմամբ և պահպանելու է այդ սկզբունքի իրականացումը:

Հաշվի առնելով այն փաստը, որ ընթերցանության նկատմամբ սերը կրթական

քաղաքականության իրականացման կարևոր բաղադրիչներից է, քանզի այն համարվում է անձի զարգացման և արժեհամակարգի հարստացման ամենաարդյունավետ միջոցներից մեկը՝ 2023թ.-ի ամռանը դպրոցում իրականացվել են գրադարանի վերանորոգման և արդիականացման աշխատանքներ: Գրադարանում բարենպաստ և ժամանակակից լուծումներով տարածք է առանձնացվել ընթերցանության, ինչպես նաև գրքերի քննարկումներ կազմակերպելու համար: Դպրոցի հարակից բակում ևս կա հարմարեցված տարածք՝ բացօթյա քննարկումներ իրականացնելու համար:

Նոյեմբերից հասանելի կլինի նաև դպրոցի գրադարանում առկա բոլոր գրքերի էլեկտրոնային ցանկը, ինչը թույլ կտա ապահովել ժամանակին համընթաց տեղեկացվածության հասանելիություն և մատչելիություն:

Գրադարանավարը.

- նորեկների համար կկազմակերպի գրադարանում ճիշտ կողմնորոշվելու և էլեկտրոնային գրանադարանից օգտվելու դասընթացներ,
- կսովորեցնի գրադարանում վարքագծի կանոնները,
- կկազմակերպի տարաբնույթ միջոցառումներ և ակցիաներ,
- կնախաձեռնի հանդիպումներ մեր քաղաքի մտավորականների հետ

Նման գրադարանի առկայությունը հնարավորություն կընձեռի սովորողների մոտ սերմանել սեր գրքի նկատմամբ և թույլ կտա խուսափել ընթերցանության մշակույթի համաշխարհային ճգնաժամից:

1.3 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻՆ ԵՎ ՆԵՐՈՒԺԻՆ

- **ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

Շենքը եռահարկ է, կապիտալ վերանորոգվել է 2001թ.-ին, հարմարեցված է,

պատուհանները հիմնականում եվրոպատուհաններ են: Ջրամատակարարումը շուրջօրյա է, ջեռուցվում է կաթսայատան միջոցով/բնական գազ:



ՏՎՅԱԼՆԵՐ ԴԱՍԱՍԵՆՅԱԿՆԵՐՈՒՄ ՍԵՂԱՆ-ՆՍՏԱՐԱՆՆԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՎԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Աղյուսակ 8. Դասասենյակի համարը	Դասասենյակի մակերեսը (քմ)	Սեղան-նստարանների դասավորվածության ձևը (շարքերով, շրջանաձև, Տ-աձև, Պ-աձև, խառը)	Սեղան-նստարանների թիվը	Սեղան-նստարանների շարքերի և միմյանց միջև հեռավորությունները
Դասաս.N1	27,1	Շարքերով	10ս. 19ն.	40սմ 70սմ
Դասաս.N2	26,1	Շարքերով	8ս. 15ն.	45սմ 70սմ
Դասաս.N3	34,6	Շարքերով	11ս. 21ն.	41սմ 70սմ
Դասաս.N4	34,8	Շարքերով	10ս. 20ն.	45սմ 45սմ
Դասաս.N5	46,8	Շարքերով	12ս. 23ն.	70սմ 80սմ
Դասաս.N6	65,0	Շարքերով	15ս. 30ն.	40սմ 75սմ
Դասաս.N7	54,1	Շարքերով	18ս. 35ն.	40սմ 75սմ
Դասաս.N8	57,3	Շարքերով	15ս. 30ն.	45սմ 75սմ
Դասաս.N9	19,3	Շարքերով	10ս. 20ն.	45սմ 30սմ
Դասաս.N10	18,8	Շարքերով	8ս. 16ն.	45սմ 75սմ
Դասաս.N11	50,3	Շարքերով	18ս. 36ն.	40սմ 75սմ
Դասաս.N12	58,1	Շարքերով	17ս. 34ն.	45սմ 70սմ
Դասաս.N13	49,1	Շարքերով	18ս. 36ն.	40սմ 70սմ
Դասաս.N14	47,8	Շարքերով	18ս. 36ն.	45սմ 60սմ
Դասաս.N15	49,3	Շարքերով	18ս. 36ն.	45սմ 60սմ
Դասաս.N16	49,4	Շարքերով	18ս. 35ն.	40սմ 60սմ
Դասաս.N17	31,2	Շարքերով	13ս. 25ն.	45սմ 60սմ
Դասաս.N18	48,2	Շարքերով	17ս. 33ն.	45սմ 70սմ
Դասաս.N19	17,2	Շարքերով	10ս. 20ն.	45սմ 45սմ
Դասաս.N20	47,3	Շարքերով	18ս. 36ն.	40սմ 70սմ

➢ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ԴՊՐՈՑԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ	
ՎԱՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ	
Տնօրեն	1
Վարչատնտեսական համակարգող	1
Տնօրենի տեղակալ	1
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ	
ՄԿԱ գծով համակարգող	1
Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների համակարգող	1
Ուսուցիչների քանակը	38
• Տարակարգ ունեցող ուսուցիչներ	6
• Կամավոր ատեստավորված ուսուցիչներ	3
• Վերապատրաստում անցած ուսուցիչներ	Բոլորը
• Վերապատրաստող ուսուցիչներ	2
• Համատեղությամբ աշխատող ուսուցիչներ	3
• Բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող ուսուցիչներ	Բոլորը
Զինղեկ	1
Հոգեբան	1
Լաբորանտ/ ուսուցիչ	2
Գրադարանավար	1
Ուսուցչի օգնական	5
ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ	
Գլխավոր հաշվապահ	1
Անձնակազմի կառավարման մասնագետ	1
Էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ	1
Խոհարար	4
Հավաքարար	4
Ընթացիկ նորոգող և սպասարկող մասնագետ	1
Պահակ	4

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ՝ ԸՍՏ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ

Ի ա	Ի բ	Ի գ	II ա	II բ	III ա	III բ	IV ա	IV բ	V ա	V բ	VI ա	VI բ	VI գ	VII ա	VII բ	VII գ	VIII ա	VIII բ	IX ա	IX բ	IX գ
27	27	20	36	35	35	34	34	31	34	35	30	31	30	28	31	22	24	25	22	23	15

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԹՎԻ ԵՎ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Տարեթիվ	Սովորողների թիվը տարեվերջին	Գերազանց	Լավ	Բավարար	ԿԱՊԿՈՒ աշակերտների թիվ
2018-2019	655	154	281	220	8
2019-2020	651	147	316	178	7
2020-2021	627	187	261	179	7
2021-2022	656	176	294	182	9
2022-2023	634	157	209	268	6

➢ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակի հրամայականն է փաստաթղթաշրջանառությունը հնարավորինս դարձնել էլեկտրոնային: Ուստի, նպատակահարմար է աստիճանական անցում կատարել փաստաթղթերի էլեկտրոնային վարման:

Ներկայումս ստեղծված են էլեկտրոնային հրամանապանակ, մանկավարժական, աշակերտական և ծնողական խորհուրդների նիստերի արձանագրությունների էլեկտրոնային պանակ:

ՏՎՅԱԼՆԵՐ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ցուցանիշ	2019-2020 Ուստարի	2020-2021 Ուստարի	2021-2022 Ուստարի	2022-2023 Ուստարի
Բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը	41 100%	43 100%	41 100%	40 100%
Ըստ մասնագիտության դասավանդող ուսուցիչների թիվը և տոկոսը	41 100%	41 100%	41 100%	40 100%
Տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը	13 32%	14 32.6%	8 19%	6 15%
Գիտական կոչում ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը	---	---	---	---
Նախարարության կողմից երաշխավորված կամ այլ կազմակերպություններում վերջին 3 տարում վերապատրաստում անցած ուսուցիչների թիվը և տոկոսը	41 100%	34 79.1%	22 54%	27 69%
Որպես ուսուցիչ վերապատրաստող (դասախոս) վերապատրաստված և վերապատրաստման դասընթացներ իրականացրած	1 2.4%	1 23%	2 4.9%	2 5,1%

Դպրոցի կառավարման մարմիններն են.

- ՀՀ Կառավարությունը,
- ՀՀ Լոռու մարզպետարանը,
- կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը,
- գործադիր մարմինը՝ ի դեմս տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի:

➢ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվել են խորհրդակցական մարմիններ՝ **մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական խորհուրդներ:**

Խորհրդակցական մարմինները գործում են օրենքով, իսկ նրանց ձևավորման կարգը և իրավասությունները սահմանվում են ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

✓ **Կառավարման խորհուրդը** գործում է դպրոցի կանոնադրության և սահմանված կարգին համապատասխան: Խորհուրդը կազմված է 9 անդամից: Խորհուրդը քննարկում է ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունները, ներքին և արտաքին գնահատման արդյունքները: Դպրոցի գործունեության արդյունավետության բարձրացմանն օժանդակելու նպատակով իրեն վերապահված գործառույթները կատարում է իր հնարավորությունների առավելագույնի սահմաններում, ներկայանում է առաջարկություններով, իրականացնում է օրենքով, հիմնադրի կողմից իրեն վերապահված կամ դպրոցի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

✓ **Մանկավարժական խորհուրդը** համալրված է փորձառու և որակյալ մասնագետներով: Մանկավարժական խորհրդի անդամները ևս պարտաճանաչ և կանոնակարգված իրականացնում են իրենց գործառույթները դպրոցի ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով, քննարկում է հանրակրթության պետական չափորոշչի պահանջների համաձայն՝ հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին վերաբերող հարցերը և դպրոցի կանոնադրությամբ սահմանված այլ հարցեր:

Մանկավարժական խորհրդի աշխատանքը ղեկավարում է դպրոցի տնօրենը:

- ✓ **Աշակերտական խորհուրդը** ստեղծված է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան, ունի ինքնակառավարման լիազորություններ, ակտիվ է և գործում է մասնակցային սկբունքներով: Դպրոցի տնօրենությունը մշտապես օժանդակում և խթանում է նրանց նախաձեռնությունները՝ ապահովելով սովորողների ստեղծագործական, վերլուծական, կազմակերպչական կարողությունների զարգացումը:
- ✓ **Ծնողական խորհուրդը** համագործակցում է և մասնակցում դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներին, ինչպես նաև ակտիվ է արտադպրոցական և ներդպրոցական միջոցառումների կազմակերպման հարցերում, ամրապնդում է դպրոցի և ծնողների միջև կապերը, տնօրենության և մանկավարժական աշխատողների հետ քննարկում և ծնողական համայնքին է ներկայացնում երեխաների դաստիարակության նկատմամբ միասնական պահանջներ: Տնօրենի, ծնողական խորհրդի կամ դասղեկների նախաձեռնությամբ հրավիրվում են արտահերթ համադպրոցական և դասարանական ծնողական ժողովներ:
- ✓ **Առարկայական մեթոդական միվորումների** ձևավորման կարգը և իրավասությունները սահմանվում են ուսումնական հաստատության կանոնադրությամբ, պարբերաբար կազմակերպում է մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ: Յուրաքանչյուր նիստի ժամանակ մեկ ուսուցիչ հանդես է գալիս մեթոդական որևէ զեկույցով, որի շուրջ ծավալվում է քննարկում: Դպրոցում գործում է 6 մեթոդական միավորում.
    1. **Տարրական կրթության**
    2. **Հումանիտար առարկաների**
    3. **Օտար լեզուների**
    4. **Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի**
    5. **Բնագիտական առարկաների**
    6. **Հարակից առարկաների**

2) ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ. ՈՒԺԵՂ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ (Ձև 1)

2.1 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅԱՄՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	**ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ**
• Բարեկարգ շենքային պայմաններ: • 2017թ.-ից սկսած՝ բազմաթիվ շինարարական աշխատանքներ՝ որոշակի հատվածների կապիտալ վերանորոգում: • Բարեգործական հիմունքներով փոխվել է դպրոց մտնող ջրագիծը, որի շնորհիվ կանխարգելվել է նկուղային հարկերի խոնավեցումը: • Կապիտալ վերանորոգված «ՍՄԱՐԹ» դասասենյակ: • Հիմնովին վերանորոգված ռազմագիտության դասասենյակ: • Վերանորոգված գրադարան՝ իր ընթերցասրահով: • Դպրոցի նկուղային հարկը նախատեսված է արտակարգ դրության պայմաններում օգտագործել իբրև ապաստարան: • Մշտական ջուր, ջեռուցում կաթսայատան միջոցով:	• Կապիտալ վերանորոգման կարիք ունեն դպրոցի 15 սանհանգույցներից 10-ը: • Թեքահարթակների բացակայություն: • Բակի երկաթբետոնե սալիկների հարթեցման կարիք:
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**ՎՏԱՆԳՆԵՐ**
Արևային էներգակիրների տեղադրում՝ էներգիայի վրա ծախսվող գումարի տնտեսում ևսանհանգույցների վերանորոգում:	Ֆինանսական միջոցների ձեռքբերման խնդիր: Բնական աղետներ՝ երկրաշարժ, ջրհեղեղ:

2.2 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	**ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ**
• Դպրոց ունի 23 համակարգիչ, որոնցից 6-ը՝ դյուրակիր: • Բնագիտական առարկաների լաբորատորիայում առկա են լաբորատոր սարքավորումներ: • «ՍՄԱՐԹ» դասասենյակը հնարավորություն է տալիս հեռավար դասեր, հետաքրքիր քննարկումներ կազմակերպելու: • Ժամանակակից սարքավորումներով հագեցած ՆԶՊ դասասենյակում հնարավորություն է ստեղծված ռազմահայրենասիրական դաստիարակության կատարելագործման համար: • Մարզադահլիճը, ճաշարանը, ուսուցչանոցը և մնացած աշխատասենյակները համալրված են անհրաժեշտ գույքով և տեխնիկայով: Դասասենյակները ևս կահավորված են անհրաժեշտ գույքով: • Հարմարավետ մարզադահլիճներն ապահովված են նաև անհրաժեշտ մարզագույքով, որոնք թարմացվում են անհրաժեշտության դեպքում:	• Վազգեն I-ին նվիրված անկյան/սենյակի բացակայություն: • Գրադարանի նյութատեխնիկական բազայի համալրման կարիք: • Բնագիտական առարկաների ցուցանմուշների սակավություն և հները նորերով փոխարինելու կարիք: • Եվս մեկ պրոյեկտորի անհրաժեշտություն:
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**ՎՏԱՆԳՆԵՐ**
• Ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով առկա նյութատեխնիկա: • Սովորողների կրթական միջավայրի բարենպաստ պայմանների համար առկա նյութատեխնիկա: • «Մաշտոց» կրթամշակութային կենտրոնը	Գույքի, նյութատեխնիկական բազայի անկանխատեսելի վնասում կամ անսարքություն:

պատրաստ է նվիրել դպրոցին Պետական ռեգիստրում գրանցված «Հայ դպրության և առաջին ազգային հերոս Վազգեն I վեհափառի թանգարան» հիմնարկը:	

2.3 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
• Դպրոցն ունի առանձին խորհուրդ: • **Խորհուրդն** իրեն վերապահված գործառույթները կատարում է՝ դպրոցի կանոնադրությամբ և սահմանված կարգին համապատասխան, իր գործունեությունը ծավալում է հանուն դպրոցի զարգացման: Իր լիազորությունների և հնարավորությունների սահմանում աջակցում է բոլոր նախաձեռնություններին: • **Ծնողական խորհրդի** հետ համագործակցության արդյունքում (ամենամսյա հանդիպումներ, բաց քննարկումներ) ամրապնդվում է ծնող-դպրոց կապը: Վերջինիս շնորհիվ հնարավոր է դառնում վեր հանել և լուծել մի շարք խնդիրներ՝ կապված սովորողների ուսումնառության որակի, վարքի և այլնի հետ: • Ապահովվում է ուսուցիչների մասնակցությունը մասնագիտական զարգացման կարիքի հիման վրա իրականացվող վերապատրաստումներին: Ուսումնադաստիարակչական տարեկան պլանում ընդգրկվում են **մանկավարժական խորհրդի** առաջարկությունները: Մշտական աջակցություն է ցուցաբերվում	• Դպրոցը չունի շրջանավարտների խորհուրդ: • Դպրոցի կառավարման խորհուրդը և ծնողական խորհուրդը հազվադեպ են հանդես գալիս դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների զարգացմանն ու դպրոցի շենքային պայմանների բարեկարգմանն ուղղված առաջարկություններով:

մասնագիտական կարողությունների որակի բարելավման ուղղությամբ: • **Աշակերտական խորհուրդի** հետ տնօրենի ամենամսյա հանդիպումների արդյունքում վեր են հանվում դպրոցում և սովորողների շրջանում առաջացած խնդիրները, քննարկվում են դրանց լուծման ուղիները և տրվում համապատասխան լուծումներ: Հետագա աշխատանքները պլանավորելիս հաշվի են առնվում խորհրդակցական մարմինների կողմից բարձրաձայնված առաջարկությունները և խնդիրները:	
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**ՎՏԱՆԳՆԵՐ**
• Պատրաստակամ և կոմպետենտ անդամների հետ համագործակցության արդյունքում դպրոցի կառավարման որակի բարձրացում: • Առկա խնդիրների լուծման հարցում որոշումների և քննարկումների հնարավորություն:	• Անբավարար ժամանակային ռեսուրսներ: • Խորհրդի անդամների գործունեության պասիվություն:

2.4 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	**ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ**
• Դպրոցը համագործակցում է՝ ԿԳՄՄՆ-ի, ԳԹԿ-ի, ԿՏԱԿ-ի, ԿԶՆԱԿ-ի, Լոռու մարզպետարանի, համայնքապետարանի, ՏՄԱԿ-ի, ԱԻՆ-ի, ՀՀ ՊՆ զորամասերի, ոստիկանության, ԱՅԲ հիմնադրամի, KASA հիմնադրամի, ՀԱԱՀ Վանաձորի մասնաճյուղի քոլեջի, Ստեփան	• Շահառու կազմակերպությունների կամ համայնքի հետ միջոցառումների կազմակերպման սակավություն: • Անբավարար ժամանակային ռեսուրսներ առավել ակտիվ համագործակցության նպատակով:

Զորյանի տուն-թանգարանի, Լոռու տարածաշրջանային պետական քոլեջի, Վանաձորի պետական համալսարանի / մի շարք ֆակուլտետների ուսանողներ տարիներ շարունակ իրենց ուսումնական պրակտիկան անց են կացնում Վանաձորի թիվ 1 հիմնական դպրոցում/, ՆորԱրար կրթական ՀԿ-ի, Վանաձորի թիվ 20, թիվ 2 հիմնական դպրոցների, Շախմատի ֆեդերացիայի, E-school-ի, Русский дом в Гюмри, և այլ կառույցների և կազմակերպությունների հետ: • ՀՀ կրթության տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքներն ուսումնասիրելով՝ ակնհայտ են դառնում դպրոցում առկա խնդիրներն ու թերությունները: • Դպրոցը համագործակցում է ծնողական համայնքի հետ, որն իր հերթին մասնակցում է դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներին, ինչպես նաև արտադպրոցական և ներդպրոցական միջոցառումների կազմակերպման հարցերում: Տնօրենության և մանկավարժական աշխատողների հետ պարբերաբար քննարկվում են երեխաների դաստիարակության և պարտականությունների հետ կապված միասնական պահանջները:	• Ոչ բոլոր ծնողներն են մասնակցություն ցուցաբերում ներդպրոցական և ներհամայնքային միջոցառումներին:
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**ՎՏԱՆԳՆԵՐ**
• Մարզպետարանն ու համայնքապետարանը հաճախ ոգևորում են աշակերտներին՝ պարգևատրելով սպորտային հաջողությունների համար: • Սոց. անապահով երեխաները մարզպետարանի շնորհիվ իրենց ամառային հանգիստը անցկացնում են Հանքավանի «Լուսաբաց» ճամբարում:	• Յուրաքանչյուր մարմնի, կազմակերպության, համայնքի առաջ ծառացած խնդիրների պատճառով դպրոցի խնդիրների անտեսում: • Զբաղվածության արդյունքում ժամանակային անբավարար ռեսուրսներ:

• Լոռու մարզպետարանը ուշադրության կենտրոնում է պահում դպրոցը, աջակցում սոց. անապահով ընտանիքների երեխաների սոցիալական հարցերի լուծմանը (դասագրքերի զումարի փոխհատուցում):	

2.5 ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	**ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ**
• Բոլոր ուսուցիչներն ունեն բարձրագույն մանկավարժական կրթություն: • Ուսուցիչներից 6-ն ունեն տարակարգեր, որոնցից 4-ը՝ առաջին աստիճանի, 1 ուսուցիչ՝ երկրորդ աստիճանի և 1 ուսուցիչ՝ չորրորդ աստիճանի: 2 ուսուցիչ ստանում են հավելավճար՝ ըստ կամավոր ատեստավորման արդյունքների: • Մշտապես վերահսկվում է ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով, ներքին կարգապահական կանոններով և ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների բարեվարքության կանոններով սահմանված պահանջների կատարման ապահովումը: • Կարևորելով միջառարկայական կապերի ապահովումը՝ ուսուցիչները պարբերաբար կազմակերպվում են համակցված և ինտեգրված դասեր, համատեղ միջոցառումներ: • Դպրոցում կան ուսուցիչներ, ովքեր մասնակցում են միջազգային ծրագրերի,	• Ոչ բոլոր ուսուցիչների կողմից ինքնակրթվելու ցանկություն: • Որոշ ուսուցիչների կողմից վերապատրաստման, հմտությունների զարգացման դասընթացներին մասնակցության պասիվություն՝ պայմանավորված ժամանակային ռեսուրսների անբավարարությամբ: • ՏՀՏ գործիքների կիրառման դժվարություններ, հատկապես տարիքային բարձր շեմ ունեցող ուսուցիչների կողմից:

դասընթացների, ծանոթանում կրթության ոլորտի նորարարություններին և դրանք կիրառում են գործնականում՝ դասապրոցեսի ընթացքում: • Վերջին 4 տարիների ընթացքում դպրոցի ուսուցիչներից 3 անգամ հաղթող են ճանաչվել ԿԳՄՍ նախարարության կողմից կազմակերպած «Տարվա լավագույնները» մրցույթում: • Ուսուցիչները մասնակցել/մասնակցում են «Հայաստանի ռուսաց լեզվի լավագույն ուսուցիչ» մրցույթին, «Կրթություն հանուն» էդքեմփին, ՀՀ սփյուռքի գործերի հանձնակատարի գրասենյակի հովանու ներքո «Ի գործ» ծրագրի շրջանակներում իրականացվող «Դպրոցի կառավարում» թեմայով դասընթացին, «Դիմակայում ենք» մեդիագրագիտության առցանց արշավի շրջանակում միջոցառումների իրականացման դրամանշնորհային մրցույթին: • Ուսուցիչների կողմից նորագույն տեխնոլոգիաների, ՏՀՏ գործիքների կիրառում ուսումնական գործընթացի արդյունավետության նպատակով: • Ուսուցիչների մեծամասնությունը հմտորեն օգտվում է ՏՀՏ միջոցներից, դասն առավել հետաքրքիր դարձնելու նպատակով հաճախ կիրառում է ՏՀՏ միջոցներով պատրաստված խաղեր, տեսանյութեր: • Պահանջվող փաստաթղթերի /այդ թվում նաև էլեկտրոնային/ վարման գործընթացն իրականացվում է՝ սահմանված կարգերի համաձայն :	

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՎՏԱՆԳՆԵՐ
• Նորարարական մեթոդների կրիառման, վերապատրաստումների մասնակցության, մասնագիտական որակների համալրման հնարավորություններ: • Հմուտ և մանկավարժական բարձր որակներով օժտված մանկավարժական համակազմ: • Հավասար մասնակցության հնարավորության և կրթական ծրագրերի իրականացման որակի ապահովում:	Ֆորս-մաժորային իրավիճակներում ուսուցիչների աշխատանքի բարդացում: Փոփոխություններին դժվար ինտեգրում: Ատեստավորման գործընթացի արդյունքում, դժվարություններով պայմանավորված մոտիվացիայի անկում, հիասթափություն:

2.6 ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏՀՏ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
• Դպրոցում համակարգչային տեխնիկայով համալրված SMART դասասենյակն ապահովված է ինտերնետ կապով: • Կարևորվում է ՀՀ ԿԳՄՄՆ-ի կողմից երաշխավորված ծրագրերում աշակերտների և ուսուցիչների ներգրավվածությունը: • Դպրոց ունի 23 համակարգիչ, որոնցից 6-ը՝ դյուրակիր. վերջիններս հարմար են դասասենյակներում ՏՀՏ կիրառմամբ դաս անցկացնելու համար: • Դպրոցն ունի նոր ծրագիր «Ռազմահայրենասիրական դաստիարակության նոր ռազմավարությունը դպրոցում», որն արժանացել է «Տարվա լավագույնները»	• Ոչ բոլոր աշակերտների և ուսուցիչների հետաքրքրվածությունը և ընդգրկվածությունը տարբեր նորարարական ծրագրերին: • Որոշ աշխատասենյակներում, ինչպես նաև դասասենյակներից մեծամասնությունում ինտերնետ կապի վատ որակ կամ բացակայություն: • Մեդիագրագիտության պակաս: • Նոր ՀՊՉ-ի ներդրումով պայմանավորված և հաշվի առնելով տարրական օղակում դասարանների աշակերտների թվաքանակը (միջինում 34-35 հոգի)՝ համակարգիչների քանակը չի համապատասխանում մեկ դասաժամի

մրցույթի խրախուսական մրցանակի: • Դպրոցն ունի «Արմաթ» լաբորատորիա, որի խմբակին մասնակցող սաները ակտիվ են և ստեղծում են բազմաթիվ խաղեր և ծրագրեր: Խմբակի ղեկավարը ևս սերտ համագործակցում է դպրոցի աշխատակիցների հետ՝ անհրաժեշտության դեպքում տրամադրելով ՏՀՏ ոլորտի հետ կապված օգնություն: • Համացանցի կիրառումը նպաստում է ոչ միայն ուսուցիչների, այլ նաև սովորողների կողմից առավել արդյունավետ, հետաքրքիր և ինտերակտիվ դարձնել դասը: • Դպրոցը, որպես մենթոր դպրոց, ընդգրկված է «Գյուղական համայնքներում բացակա ուսուցիչների խնդրի լուծումը էլեկտրոնային դասավանդման միջոցով» ծրագրում: • Հանդիսությունների դահլիճում ևս առկա է պրոյեկտոր, որը թույլ է տալիս մեծ էկրանով ցուցադրել անհրաժեշտ նյութերը միջոցառումների, ինչպես նաև ժողովների ժամանակ:	ընթացքում դրանցից օգտվող աշակերտների թվաքանակին, ուստի կա անհրաժեշտություն ձեռք բերել ևս 15 համակարգիչ:
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**ՎՏԱՆԳՆԵՐ**
• Համագործակցություն համայնքում առկա ԱԹՍ ստեղծարար կենտրոնի հետ: • Վերապատրաստումների հնարավորություն: • Բոլոր աշխատասենյակներում, ինչպես նաև դասասենյակներից մեծամասնությունում որակյալ ինտերնետ կապի ապահովում: • Պրոյեկտորի և ինտերնետ կապի առկայության պարագայում կարելի է փոխարինել տարբեր քարտեզները, պաստառներն ու ցուցադրական նմուշները էկրանին ցուցադրվող 3D պատկերներով: • Առաջավոր փորձի փոխանակում:	• Սովորողների հետաքրքվածության և մոտիվացիայի պակաս: • Ծնողների կողմից նորարարական մեթոդների հանդեպ անվստահություն: • Ուսուցիչների ինտեգրումը նոր գաղափարներին: • Ոչ բավարար ֆինանսական միջոցներ:

2.7 ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
• Դպրոցի ուսուցիչները մշտապես առաջնորդվում են հանրակրթական պետական չափորոշիչներով, ծրագրերով՝ ապահովելով վերջիններիս կողմից ներկայացվող պահանջները: • Բոլոր ուսումնական պլանները կազմված են՝ ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան: • Հանրակրթական ծրագրերի ավարտին ստուգվում է ՀՊՉ-ի պահանջներին սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների համապատասխանությունը, իրականացվում է պետական ամփոփիչ ատեստավորում: • Սովորողների առաջադիմության ընթացիկ և ամփոփիչ գնահատումը, դրա ձևերի, մեթոդների ընտրությունը կատարվում է՝ ՀՊՉ-ին և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան: • Շաբաթական մեկ օր տնօրենի տեղակալի նախաձեռնությամբ իրականացվում են հանդիպումներ՝ չափորոշիչների, նոր դասագրքերի հետ կապված հարցերի քննարկման նպատակով: • 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչների մի մասը matyan.emis.am կայքում թեմատիկ պլանները լրացրել են՝ նոր պահանջներին համապատասխան: • Մեթոդմիավորումները, որոնք դպրոցում թվով վեցն են, իրենց աշխատանքները	• Ուսուցիչների կողմից նոր ՀՊՉ-ի պահանջներին բավարարող ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման դժվարություններ՝ պայմանավորված դասագրքերի պակասությամբ կամ բացակայությամբ: • Նոր դասագրքերի և ուսումնադիդակտիկ նյութերի ուսումնասիրման անբավարար ժամանակային ռեսուրսներ: • 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում դասավանդող ոչ բոլոր ուսուցիչներն են matyan.emis.am կայքում թեմատիկ պլանները լրացրել նոր պահանջներին համապատասխան: • Ոչ միշտ է տնային առաջադրանքների բովանդակության ընտրությունը կատարվում ՀՊՉ-ին համապատասխան:

կազմակերպում են՝ հաշվի առնելով ՀՊՉ-ի պահանջները, առարկայական ծրագրերի բովանդակությունը: • 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում դասավանդող բոլոր ուսուցիչները, տնօրենը, տնօրենի տեղակալը մասնակցել են նոր ՀՊՉ-ի վերապատրաստումներին:	
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**ՎՏԱՆԳՆԵՐ**
• Իրականացնել սովորողների կարողունակությունների ձևավորման և զարգացմանն ուղղված կրթություն: • Նպաստել սովորողների մոտիվացիայի բարձրացմանն՝ ուսումնական գործընթացում ակտիվություն ցուցաբերելու նպատակով:	• ՀՊՉ-ի պահանջների ոչ ճիշտ ընկալում և կիրառում ուսուցման ընթացքում: • Ուսուցիչների համար ուսումնական նյութերի նորացման հետևանքով տարբեր դժվարություններ և դժգոհություններ թե՛ ուսուցիչների, թե՛ ծնողական համայնքի կողմից: • Ուսուցիչների մոտ մոտիվացիայի պակաս՝ լրացուցիչ աշխատանքներ կազմակերպելու համար:

2.8 ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ, ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	**ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ**
• Դպրոցը որդեգրել է ժողովրդավարական ոճի կառավարման ձև և հնարավորինս պահպանում է աշխատակիցների, ուսուցիչների, սովորողների հետ համագործակցային հարաբերությունները: • Դպրոցն իրականացնում է ներառական կրթություն, որի կազմակերպման համար մանկավարժական համակազմը սերտ համագործակցում է ծնողների և ՏՄԱԿ-ի հետ: • Դպրոցում պահպանվում է մասնակցային սկզբունքը, ուսուցիչները հնարավորություն	• Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի գնահատման մեխանիզմների բացակայություն: • Ոչ բոլոր աշխատակիցների կողմից է պահպանվում բազմակարծիք և մասնակցային սկզբունքը՝ կապված անհատական որակների հետ:

ունեն կազմակերպել, իրականացնել տարբեր միջոցառումներ և նախագծեր, որոնց ընթացքում հնարավորություն ունեն ստեղծագործել, համագործակցել միմյանց հետ: • Կրթական միջավայրը հնարավորինս խթանում է բազմակարծիք միջավայրի ստեղծմանը՝ նպաստելով սովորողների, ուսուցիչների և և մյուս աշխատողների ազատ և արդյունավետ մտածելուն և գործելուն:	• Հատուկ սեմինարների իրականացման փորձի պակաս՝ վերը նշված արժեքային միջավայրի ստեղծման և պահպանման նպատակով:
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**ՎՏԱՆԳՆԵՐ**
• Առավել արդյունավետ, նորարարական մոտեցումներով կրթական միջավայրի ստեղծում: • Ուսուցիչների և սովորողների մասնակցությունը ուսումնական կյանքի կազմակերպման գործում: • Նոր մտքերի գեներացում, յուրաքանչյուր սովորողի ներառում ուսումնական և ստեղծագործական միջավայր:	• Բազմակարծիք և մասնակցային արժեքների ոչ ճիշտ ընկալում և սահմանված վարքի նորմերից շեղվելու ռիսկեր: • Ներառականության տարբեր դեպքերի հետ կապված ոչ ճիշտ վերաբերմունքի դրսևորումներ:

2.9 ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ, ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	**ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ**
• Դպրոցը միշտ ուշադրության կենտրոնում է պահում աշխատակազմի անդամների ձեռքբերումների և դրանց լուսաբանման հարցը, ինչպես դպրոցի էլ. կայք էջում, այնպես էլ սովորողների, ծնողների շրջանում՝ արժևորելով ուսուցչի դերը հասարակության կյանքում: • Տնօրենությունը խրախուսում է ուսուցիչների մասնակցությունը կամավոր ատեստավորմանը, մասնագիտական որակի բարձրացմանն ուղղված վերապատրաստումին:	• Ֆինանսական ռեսուրսների սակավություն աշխատակազմի անդամների խրախուսման նպատակով: • Ոչ բոլոր ուսուցիչների ցանկությունը մասնակցելու կամավոր ատեստավորման: • Որոշ ուսուցիչների ինքնակրթվելու ցանկության ցածր ցուցանիշ կամ բացակայություն:

• Դպրոցը հնարավորությունների սահմաններում ապահովում է մանկավարժական համակազմի ինքնակրթության հնարավորությունները՝ տարբեր համագործակցությունների, փորձի փոխանակման և վերապատրաստումների մասնակից դարձնելով: • Սահմանված նվազագույնից բարձր՝ 145.142 ՀՀ դրամ, ուսուցչական մեկ դրույքի համար վճարվող աշխատավարձը ևս խրախուսման և մոտիվացիայի ձև է: • Տարակարգ ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցիչների հավելավճարները դպրոցը վճարում է օրենքով սահմանված կարգով: • Խրախուսվում և խթանվում են աշխատողների ստեղծագործական նախաձեռնությունները: • Ուսումնական տարվա վերջում խրախուսվում են /նյութական և ոչ նյութական պարգևատրումներ/ ձեռքբերումներ և հաջողություններ գրանցած աշխատողները:	• Աշխատակազմի անդամների կանոնակարգված խրախուսման մեխանիզմների բացակայություն:
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**ՎՏԱՆԳՆԵՐ**
• Միջոցառումների կազմակերպում աշխատակազմի անդամների խրախուսման նպատակով: • Մոտիվացիայի բարձրացում տարբեր վերապատրաստումների միջոցով: • Աշխատակազմի դերի բարձրացում հասարակության տարբեր շրջանակներում՝ նրանց ձեռքբերումների մասին իրազեկելով:	• Մոտիվացիայի պակասի, ուսուցչի վարկանիշի անկման արդյունքում երիտասարդ ուսուցիչների կողմից աշխատանքից դուրս գալու ցանկություն: • Խրախուսման համար ոչ բավարար ռեսուրսներ: • Ինքնակրթվելու ցանկության բացակայություն:

2.10 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	**ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ**
• Դպրոցն իրականացնում է կայուն և ժամանակին ֆինանսավորում: • Դպրոցը կատարում է աշխատավարձերի և հարկերի ժամանակին վճարում: • Տարակարգ ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցիչների հավելավճարները վճարվում են աշխատավարձերի հետ միաժամանակ՝ ըստ սահմանված ժամանակցույցի: • Դպրոցի տնտեսած միջոցները ուղղվել են աշխատավարձերի վճարմանը (կառավարության որոշմամբ ուսուցչի աշխատավարձերի 10% բարձրացման ժամանակ): • Ուսուցչական մեկ դրույքը դպրոցում սահմանված է 145.142 ՀՀ դրամ, որը սահմանված նվազագույնից բարձր է: • Դպրոցում առավելագույն աշխատավարձ ստացող ուսուցիչ է կամավոր ատեստավորում անցած ռուսերենի ուսուցիչը /377.304 ՀՀ դրամ/: • Դպրոցում առկա գույքը հաշվառված է, կատարված է գույքագրում: • 2022թ. հունվարի դրությամբ ուսուցների միջին ծանրաբեռնվածությունը կազմում է 0.83 դրույք,	• Դպրոցի ֆինանսավորման համար կիրառվող ֆինանսական բանաձևի սահմանափակում՝ կապված լիցենզիայով հատկացված աշակերտների թվի սահմանափակմամբ, ինչն էլ խոչընդոտ է հանդիսանում նոր դասարանների ձևավորմանը: • Պետական բյուջեի միջոցներից հիմնական դպրոցներում այլ ծախսերի համար ֆինանսավորման լրացուցիչ գործակցի բացակայությունը: • Ուսումնասիրելով վերջին երեք տարիների ֆինանսական միջոցների բաշխվածությունը՝ պարզ է դառնում, որ ֆինանսական միջոցների 90 տոկոսից ավելին հատկացվում է աշխատավարձերին, լրավճարներին և կոմունալ ծախսերին:

իսկ 2023թ. սեպտեմբերի դրությամբ՝ 0.90: • Բյուջեի ծախսի հիմնական ուղղություններն են. աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ, պահմանման /կոմունալ վճարներ/ և այլ ծախսեր: • 2021թ.-ից սկսած միջինում 10 ուսուցիչ մասնակցել են պարտադիր ատեստավորմանը /յուրաքանչյուր ուսուցչի համար պետ. բյուջեից վճարվել է 24.000 ՀՀ դրամ/: • Տարեկան և ճշտված նախահաշիվները, գնումների պլանը, եռամսյակային ֆինանսատնտեսական հաշվետվությունները տեղադրվում են դպրոցի կայք էջում: • 2017-2022թթ. իտալահայ գործարար և բարերար Գագիկ Աարուխանյանից դպրոցն ստացել է մշտական աջակցություն:	
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**ՎՏԱՆԳՆԵՐ**
• Նոր բարերարների հետ համագործակցություն: • Նոր շենքային պայմանների ստեղծում, որը կնպաստի լիցենզիայով սահմանված տեղերի ավելացմանը: • Հաշվի առնելով, որ դպրոցը ֆինանսավորվում է ըստ դասարանների թվի՝ 2026թ. սեպտեմբերի 1-ից դասարաններում սովորողների առավելագույն թվի նվազումով պայմանավորված՝ կավելանա նաև դասարանների թիվը:	• Անկանխատեսելի ֆինանսական ծախսեր՝ կապված տարատեսակ ֆորս-մաժորային իրավիճակներ: • Ֆինանսական ռեսուրսների սահմանափակման հետ կապված զարգացման ծրագրի որոշ նպատակների իրականացման ձախողում: • Նոր շենքային պայմանների ստեղծման անհնարինություն:

3) ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ (Ձև 2)

ՆՊԱՏԱԿ 1	*Դպրոցի շենքային պայմանների բարեկարգում և անվտանգ ուսումնական (ֆիզիկական) միջավայրի ապահովում:*
ԽՆԴԻՐ	*1. Դպրոցի 15 սանհանգույցներիc 10-ի հիմնովին վերանորոգում:* *2.Բակի երկաթբետոնե սալիկների հարթեցում:*
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	• *Կոլեգիալ կառավարման խորհրդի հետ հիմնախնդիրների և նպատակների քննարկում:* • *Քննարկման արդյունքում նախագծել աշխատանքները, դպրոցի համակարգողին ներկայացնել այն և սկսել աշխատանքները:* • *Գնումների պլանում նախատեսել հաշվարկված գումարը:*
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ	Դպրոցի հիմնադիր, լիազոր մարմին, դպրոցի կառավարման խորհուրդ, դպրոցի տնօրեն, վարչատնտեսական համակարգող, դպրոցի այլ աշխատակիցներ ըստ անհրաժեշտության:
ՄԻՋՈՑՆԵՐ	Պետական բյուջե,բարեգործական միջոցներ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ	Դպրոցի վարչատնտեսական մասի համակորգողի և կառավարման խորհրդի կողմից տրված եզրակացություն, կարիքների գնահատում և համապատասխանությունը առկա իրավիճակին:
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ	Նախահաշվի կազմում, ֆինանսական միջոցների խելամիտ բաշխում, պարբերաբար կատարված աշխատանքների վերահսկում և իրազեկում շահառուներին:
ՌԻՍԿԵՐ	Ֆինանսական ռեսուրսներին անհամապատասխանություն նպատակին: Ֆորս-մաժորային իրավիճակներ: Եղանակային անբարենպաստ պայմաններ:
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	2023-2024 ուստարի

ՆՊԱՏԱԿ 2	*Դպրոցի անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի համալրում*
ԽՆԴԻՐ	*1.Արդիականացնել լաբորատորիաները՝ նոր սարքավորումների և նյութերի ձեռքբերմամբ:* *2. Ձեռք բերել պրոյեկտոր:*
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	*●Դպրոցի վարչատնտեսական համակարգողի հետ համագործակցել, որոշել անհրաժեշտ գումարի չափը:* *●Սարքավորումների և նյութերի ձեռքբերումը նախատեսել գնումների պլանում:*
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ	Լիազոր մարմին,դպրոցի տնօրեն, վարչատնտեսական համակարգող, դպրոցի այլ աշխատակիցներ՝ ըստ անհրաժեշտության:
ՄԻՋՈՑՆԵՐ	Պետական բյուջե, բարեգործական միջոցներ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ	Կարիքների գնահատում, նախահաշվի կազմում, ֆինանսական միջոցների խելամիտ և արդյունավետ բաշխում:
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ	Գործողությունների ընթացքի վերահսկում, վերլուծություն՝ համապատասխանությունը գործողությունների արդյունքների և կարիքների: Հաշվետվությունների կազմում:
ՌԻՍԿԵՐ	Ֆինանսական ռեսուրսների անհամապատասխանությունը նպատակին: Ֆորս-մաժորային իրավիճակներ:
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	2023-2024, 2024-2025 ուստարիներ

ՆՊԱՏԱԿ 3	***Դպրոցի զարգացումն ապահովելու նպատակով՝ ֆինանսական կայուն հոսքերի ապահովում:***
ԽՆԴԻՐ	*1. Պետական բյուջեից ստացվող ֆինանսների արդյունավետ բաշխում:* *2.Ապահովել հուսալի հարաբերություններ բարերարների հետ:* *3. Դպրոցի կայացած, գործարար շրջանավարտներից ստեղծել խորհուրդ, որը կօժանդակի դպրոցի ֆինանսական արդյունավետ գործունեությանը:* *4.Էներգիայի վրա ծախսվող գումարի տնտեսում:*
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	• *Մշակել հաշվետվության ձևեր:* • *Ֆինանսական աջակցությունները ծախսել նպատակային:* • *Էներգիայի վրա ծախսվող գումարի տնտեսում:*
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ	Վարչատնտեսական մասի համակարգող, կառավարման խորհուրդ:
ՄԻՋՈՑՆԵՐ	Պետական բյուջե, բարեգործական միջոցներ:
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ	Լիազոր մարմնի համաձայնություն, դպրոցի կառավարման խորհրդի դրական եզրակացություն:
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ	Պարբերաբար հաշվետվությունների ներկայացում Իրականցվող աշխատանքների ընթացիկ վերահսկողություն և վերլուծություն:
ՌԻՍԿԵՐ	Ոչ բավարար ֆինանսական միջոցների առկայություն Համագործակցային հարաբերությունների ոչ բավարար մակարդակ ֆինանսական միջոցներ հատկացնելու նպատակով:
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	2023- 2024, 2024-2028 ուստարիներ

ՆՊԱՏԱԿ 4	***Ձեռնարկատիրական գործունեության իրականացում (Բատիկա տեխնիկայով նկարված էկո պայուսակների արտադրանք):***
ԽՆԴԻՐ	*1.Սովորողների ձեռնարկատիրական կարողությունների, հմտությունների ձևավորում և զարգացում:* *2.Սովորողների մասնակցային արժեքների ձևավորում՝դպրոցի ֆինանսական միջոցների կուտակման նպատակով:* *3.Ոչ ֆորմալ կրթության իրականացում:*
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	*●Ձեռնարկատիրական կոնկրետ ոլորտի ընտրություն սովորողների մասնակցությամբ՝հաշվի առնելով սովորողների նախասիրությունները և ժամանակի պահանջները:* *●Պլանավորել ձեռնարկատիրական գործունեության ողջ ընթացքը:* *●Անհրաժեշտ նյութերի ձեռքբերում:* *●Աշխատանքների ճիշտ բաժանում:* *●Ժամանակի արդյունավետ տնօրինում:* *●Արտադրանքի սպառման գործընթացի կազմակերպում:*
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ	Դպրոցի տնօրեն, վարչատնտեսական համակրգող, ՄԿԱ գծով համակարգող, «Տեխնոլոգիա» և «Կերպարվեստ» առարկաների ուսուցիչներ:
ՄԻՋՈՑՆԵՐ	Մարդկային, ժամանակային ռեսուրսներ, անհրաժեշտ նյութատեխնիկական բազա, համագործակցային հարաբերություններ:
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ	Իրականացնել շարունակական գնահատում և վերլուծություն աշխատանքների ընթացքի արդյունավետության ցուցանիշը պարզելու նպատակով: Սովորողների մոտ ձեռնարկատիրական կարողությունների և հմտությունների գնահատում՝ ըստ ստացված արդյունքների: Հետադարձ կապ սովորողների կողմից, աշխատանքների որակի բարձրացման նպատակով:
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ	Արտադրանքի ծավալների համապատասխանությունը ակնկալվող արդյունքներին: Արտադրանքի որակի մակարդակի վերահսկողություն: Արտադրանքի սպառողականության մշտադիտարկում և ապահովում:
ՌԻՍԿԵՐ	Անհամապատասխանություն արտադրանքի պահանջվող բնութագրերին՝ որակի մակարդակին, կատարողականին,ժամանակի կառավարմանը: Ստացված ֆինանսական միջոցների և ծախսված ռեսուրսների հակադարձ համեմատականություն: Սովորողների մոտիվացիայի բացակայություն:
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	2023-2028 ուստարի

ՆՊԱՏԱԿ 5	***Կառավարման, խորհրդակցական մարմինների համագործակցային, կառուցողական հարաբերությունների ձևավորում: Շրջանավարտների և հոգաբարձուների խորհրդի ստեղծում:***
ԽՆԴԻՐ	*1.Կոլեգիալ կառավարման մարմնի, խորհրդակցական մարմինների հետ սահմանված կարգով աշխատանքների կազմակերպում, հանդիպումներ և քննարկումներ:* *2.Ակտիվ, աջակից խորհրդակցական մարմինների առկայություն:* *3.Դպրոցի բազմաթիվ հարցերում մասնակից դարձնել նաև շրջանավարտներին՝ որպես սեփական կրթօջախ:* *4.Հոգաբարձուների խորհրդի շնորհիվ իրականացնել մի շարք ծրագրեր:*
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	• *Իրականացնել հոգաբարձուների խորհրդի ձևավորում:* • *Կատարել շրջանավարտների հավաքագրում և խորհրդի կազմում:* • *Մշտապես կոլեգիալ կառավարման մարմնին ներգրավել դպրոցում իրականացվող միջոցառումներին, իրազեկել և ժամանակին կատարել նախատեսված աշխատանքները:* • *Խորհրդակցական մարմիններից հատկապես ակտիվացնել ծնողական խորհրդին, բարձրացնել նրա դերն ու մասնակցությունը դպրոցին վերաբերող կարևոր հարցերի լուծման գործում:*
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ	Դպրոցի տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող, ՄԿԱ գծով համակարգող, ԴԱ համակարգող:
ՄԻՋՈՑՆԵՐ	Մարդկային, ժամանակային ռեսուրսներ, համագործակցային հարաբերություններ:
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ	Գնահատել և կանոնակարգել այն խնդիրներն ու հարցերը, որոնցում պետք է համագործակցել համապատասխան մարմինների հետ: Համագործակցության արդյունքների վերլուծություն: Արդյունավետության գնահատում:
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ	Հաշվետվություններ, հետադարձ կապ, իրազեկումներ:
ՌԻՍԿԵՐ	Համապատասխան անդամների կողմից համագործակցության նպատակով ժամանակի խնդիր: Համագործակցային անառողջ պայմաններ:
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	2023-2028 ուստարի

ՆՊԱՏԱԿ 6	***Ապահովել մանկավարժական համակազմի մասնագիտական որակների, ինքնակրթության համար անհրաժեշտ պայմաններ:***
ԽՆԴԻՐ	*Ուսուցիչների վերապատրաստումների, կամավոր և պարտադիր ատեստավորման մասնակցության առավելագույն բարձր ցուցանիշի ապահովում:*
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	*●Վերապատրաստման ընթացքում ստացած գիտելիքների կիրառելիություն դասապրոցեսի ընթացքում:* *●Մշակել խրախուսման մեխանիզմներ այն ուսուցիչների համար, որոնք ներկայացնում են նորարարական, ինքնուրույն մշակված ծրագրեր իրականացնելու նպատակով:*
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ	Դպրոցի տնօրեն, վարչատնտ. մասի համակարգող, տնօրենի տեղակալ, մանկավարժներ:
ՄԻՋՈՑՆԵՐ	Ֆինանսական, մարդկային և ժամանակային ռեսուրսներ:
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ	Անհրաժեշտ կարիքների գնահատում: Ուսուցիչներ կատարած աշխատանքների արդյունավետության վերլուծություն: Ինքնակրթության, վերապատրաստումների արդյունքում ստացած հմտությունների կիրառելիության արդյունավետության գնահատում:
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ	Դասալսումներ, բաց դասեր, միջոցառումներ ուսուցիչների դերի բարձրացման նպատակով, խրախուսման միջոցների կիրառում:
ՌԻՍԿԵՐ	Ուսուցիչների պասիվություն կամավոր ատեստավորման, վերապատրաստումներին մասնակցության հարցերում: Ժամանակային ռեսուրսների ոչ բավարար լինելը: Մոտիվացիայի բացակայությունը:
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	2023-2028 ուստարի

ՆՊԱՏԱԿ 7	***Ապահովել կրթված և դաստիարակված, սեփական և համամարդկային մշակության արժեքները կրող, բռնությունից պաշտպանված, բազմակարծիք և մասնակցային որակներով օժտված աշակերտական համակազմ:***
ԽՆԴԻՐ	*1.Ապահովել իր իրավունքներն պարտականությունները գիտակցող, կողմնորոշվող և ինքնակառավարվող սովորողներ:* *2.Բուլինգի դեպքերի կանխարգելում, ներառական, բազմակարծիք և մասնակցային միջավայրի ստեղծում:*
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	*●Տարբեր միջոցառումների, քննարկումների, բաց դասերի իրականացում սովորողների ինքնակառավարման որակներ ձևավորելու նպատակով:* *●Համագործակցություն տարբեր կառույցների, հետ իրազեկման միջոցառումներ իրականցնելու նպատակով՝ երեխաների անձի զարգացման, իրավունքների գիտակցման, բռնության դեպքերի կանխարգելման թեմաներով:* *●Մանկավարժական համակազմի և ծնողների համագործակցություն բռնության, հալածանքի դեպքերը բացահայտելու և կանխարգելելու նպատակով:* *●Սովորողներին հնարավորություն տալ գտնվելու բազմակարծիք միջավայրում, ապահովելով նրանց մտքի ազատության ու ստեղծագործական մտածողության զարգացումը:* *●Սովորողներին մշտապես ներառել տարբեր միջոցառումների կազմակերպման հարցերում՝ մասնակցային որակների ձևավորման նպատակով:* *●Հոգեբանի մասնակցությամբ պարբերաբար իրականացնել քննարկումներ:*
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ	Դպրոցի տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծով համակարգող, հոգեբան, մանկավարժական համակազմ:
ՄԻՋՈՑՆԵՐ	Մարդկային ռեսուրսներ, համագործակցային հարաբերություններ տարբեր կառույցների, ՀԿ-ների հետ :
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ	Գիտելիքի և արժեհամակարգի գնահատում և վերլուծություն: Սովորողների առաջադիմության վերլուծություն: Բռնության դեպքերի քանակի և բնույթի վերլուծություն:
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ	Պարբերաբար գիտելիքների ստուգում: Հարցումներ սովորողների և ուսուցիչների շրջանում: Յուրաքանչյուր ուսումնադաստիարակչական խնդրի, բռնության դեպքի նկատմամբ հետևողական աշխատանքների իրականացում:
ՌԻՍԿԵՐ	Սովորողների կողմից կրթության նկատմամբ մոտիվացիայի ցածր ցուցանիշ: Բռնության դեպքերի դժվար բացահայտում: Ներառականության սկզբունքի իրացման դժվարություններ:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	2023-2028 ուստարի

ՆՊԱՏԱԿ 8	***Ստեղծել կրթական միջավայր՝ միտված սովորողների գիտելիքների և կարողությունների առաջընթացին և հաջողություններին:***
ԽՆԴԻՐ	*1.Սովորողների կրթվածության, գիտելիքների, կարողությունների բարձր մակարդակի ապահովում:* *2.Ուսումնական միջավայրի ապահովում՝ համապատասխան նոր ՀՊՉ-ին և առարկայական ծրագրերին:* *3.Տարբեր ուղղվածությամբ խմբակների ստեղծում:*
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	*Ուսուցիչների կողմից նորարարական մեթոդների, ՏՀՏ գործիքների կիրառում:* *Ուսուցիչների կողմից նոր ՀՊՉ-ի պահանջներին բավարարող դասերի կազմակերպում:* *Ինտերակտիվ, զարգացնող և մոտիվացնող բաց դասերի կազմակերպում:* *Տարբեր մարզային, հանրապետական օլիմպիադներում սովորողների մասնակցության ակտիվության ապահովում:* *Խրախուսման մեխանիզմների ստեղծում:* *Տարբեր ուղղվածությամբ խմբակների միջոցով զարգացնել սովորողների ստեղծագործական մտածողությունը, ստեղծել հետաքրքրություն մշակույթի և այլ ոլորտների հանդեպ:*
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ	Դպրոցի տնօրեն, ուսումնական գծով տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդմիավորումներ:
ՄԻՋՈՑՆԵՐ	Մարդկային ռեսուրսներ, ուսումնադիդակտիկ տարբեր նյութեր, ՏՀՏ գործիքներ:
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ	Պարբերաբար կատարել դասալսումներ: Գնահատել և վերհանել սովորողների կրթական կարիքները:
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ	Գիտելիքների պարբերաբար ստուգում: Ներդպրոցական մրցույթների կազմակերպման ձևով ստուգումներ:
ՌԻՍԿԵՐ	Աշակերտների և ուսուցիչների մոտ մոտիվացիայի պակաս: Փորձի փոխանակման և համագործակցության, ինքնակրթության ցանկության բացակայություն:
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	2023-2028 ուստարի

ՆՊԱՏԱԿ 9	***Իրավական ակտերի, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ճիշտ վարում, օրենսդրական նորմերի պահպանում:***
ԽՆԴԻՐ	*1. Հետևել օրենսդրական փոփոխություններին, իրազեկել դրանցմասին վարչական աշխատողներին:* *2. Իրականացնել դասընթացներ էլեկտրոնային մատյանների վարման ուղղությամբ, ուղղորդել ուսուցիչներին:* *3. Emis համակարգում աշխատանքների ժամանակին կատարում:* *4. Մշակել նորագույն տեխնոլոգիաների տիրապետման կանոնակարգ:* *5. Աստիճանական անցում փաստաթղթերի էլեկտրոնային վարման:*
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	*●Իրավական ակտերի վարումը իրականացնել օրենքով սահմանված կարգով:* *●Հետևողական լինել էլեկտրոնային մատյանների վարմանը ամբողջ տարվա ընթացքում:* *●Emis համակարգում աշխատանքների վերահսկում:* *●Պաշտոնական էջի, mullberry փաստաթղթաշրջանառության վերահսկողություն:* *●Հասարակական կարգով իրականացնել դասընթացներ ինչպես դպրոցի մասնագետների, այնպես էլ հրավիրված մասնագետների միջոցով:* *● էլեկտրոնային հրամանապանակ, մանկավարժական, աշակերտական և ծնողական խորհուրդների նիստերի արձանագրությունների էլեկտրոնային պանակի ստեղծում և վարում:*
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ	Դպրոցի տնօրեն, տնօրենի տեղակալ,ուսուցիչներ, օպերատոր, դասղեկներ, ՏՀՏ ոլորտում վերապատրաստված մասնագետներ:
ՄԻՋՈՑՆԵՐ	Մարդկային ռեսուրսներ, ՏՀՏ միջոցներ:
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ	Գնահատել կատարված աշխատանքների որակը ըստ սահմանված պահանջների:
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ	Մշտական վերահսկողություն իրականացնել տարբեր էլ.հարթակներում կատարված աշխատանքների նկատմամբ: Իրականացնել վերլուծություններ:
	Աշխատակազմի անիրազեկվածություն:

ՌԻՍԿԵՐ	Ժամանակային ռեսուրսների ոչ ճիշտ բաշխում:
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	2023-2028 ուստարի

ՆՊԱՏԱԿ 10	***Դպրոց-ծնող-համայնք կապերի համագործակցային հարաբերությունների ամրապնդում:*** ***Կայուն համագործակցություն դպրոցի զարգացմանը նպաստող կառույցների և բարեգործների հետ:***
ԽՆԴԻՐ	*1.Գործընկերային հարաբերությունների պահպանում:* *2.Մարզի և հանրապետության առաջատար հանրակրթական, միջնակարգ, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ կայուն կապերի հաստատում:* *3.Մարզի և հանրապետության կրթամշակութային ՀԿ-ների, զորամասերի, եկեղեցու և այլ կառույցների հետ իրականացնել տարբեր միջոցառումներ:*
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	*●Մերտ համագործակցել մարզպետարանի, համայնքապետարանի, ծնողական համայնքի հետ, նրանց ներգրավել արտադպրոցական և ներդպրոցական միջոցառումների կազմակերպչական աշխատանքներում:* *●Պարբերաբար իրականացնել բարեգործների հետ քննարկումներ :* *●Համագործակցության նպատակով կազմել համապատասխան հաստատությունների և կազմակերպությունների ցանկ, ուսումնասիրել նրանց ծրագրերն ու հաջողված փորձը:* *●Ուսումնասիրել առաջատար դպրոցների հաջողությունները:* *●Միջնակարգ, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ այցելությունների ժամանակ վերհանել նրանց հաջող ուսումնառության համար դիմորդի մուտքային պահանջները:*
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ	Դպրոցի տնօրեն, տնօրենի տեղակալ, դասկեղներ, ուսուցիչներ:
ՄԻՋՈՑՆԵՐ	Մարդկային, ժամանակային ռեսուրսներ, համագործակցային կապեր:
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ	Վերլուծել և գնահատել համագործակցության արդյունքները, դրանց ազդեցությունը դպրոցի և ուսումնադաստիարակչական գործընթացների վրա:
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ	Իրականացնել հետադարձ կապ համագործակցող կառույցների հետ: Համագործոկցությունը և միջոցառումների իրականացումը դարձնել շարունակական: Մշակել հստակ պլաններ հետագա համագործոակցությունը պահպանելու նպատակով:
	Տարբեր մարմինների և կառույցների կողմից համագործակցելու

ՌԻՍԿԵՐ	ցանկության բացակայություն: Ժամանակային ոչ բավարար պայմաններ՝ մարդկային ռեսուրսներին ներգրավելու նպատակով: Ֆորս-մաժորային իրավիճակների առկայություն:
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	2023-2028 ուստարի

ՆՊԱՏԱԿ 11	***Գրադարանի վերանորոգում և արդիականացում, ընթերցանության համար բարենպաստ և ժամանակակից լուծումներով տարածքի առանձնացում:***
ԽՆԴԻՐ	*1.Բարեկարգ գրադարանի ապահովման անհրաժեշտություն, սովորողների մոտ գրքի նկատմամբ սեր և հետաքրքրություն սերմանելու նպատակով:* *2.Ընթերցանության մշակույթի համաշխարհային ճգնաժամից խուսափելու խնդիր:* *3.Սովորողների մոտ ընթերցանության նկատմամբ հետաքրքրվածություն ապահովելու նպատակով՝ հարմար կրթական միջավայրի ստեծման անհրաժեշտություն:* *4.Ուսումնադիդակտիկ նյութերի, գեղարվեստական գրականության, մասնագիտական գրականության, մեթոդական ձեռնարկների և այլ գրքերի համալրման կարիք:*
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	*●Գրադարանի վերանորոգման հարցը ներկայացվել է դպրոցի կառավարման խորհրդին, այն քննարկվել է և հավանության է արժանացել խորհրդի կողմից:* *●Աշխատանքների իրականացում ըստ ներկայացված ծրագրի և պլանավորված քայլերի հաջորդականության:* *●Կազմել անհրաժեշտ գույքի և գրականության ցանկ՝ տեղայնացման և ձեռք բերելու նպատակով:* *●Գրադարանում առկա գրականության էլեկտրոնային ցանկի ստեղծում, ինչը կապահովի ժամանակին համընթաց տեղեկացվածության հասանելիություն և մատչելիություն:*
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ	Դպրոցի տնօրեն, լիազոր մարմին, կառավարման խորհուրդ, վարչատնտեսական համակարգող, գրադարանավար, բանվոր:
ՄԻՋՈՑՆԵՐ	Պետական բյուջեից ստացվող ֆինանսական միջոցներ, արտաբյուջետային միջոցներ, մարդկային, ժամանակային ռեսուրսներ:
ԳՆԱՀԱՏՄԱՆ	Գնահատել և վերլուծել սովորողների մոտ ընթերցանության

ՉԱՓԱՆԻՇՆԵՐ	նկատամամբ հետաքրքրվածության և ակտիվության ցուցանիշը: Ներկայացնել համապատասխան հաշվետվություն:
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ	Պարբերաբար հետևել աշխատանքների ընթացքին: Իրականացնել ծրագրված նպատակների և իրականացված աշխատանքների համապատասխանության վերլուծություն: Լուսաբանել և իրազեկել կատարված աշխատանքների մասին կառավարման խորհրդին :
ՌԻՍԿԵՐ	Ֆինանսական միջոցների բացակայություն կամ ոչ բավարար քանակ՝ սահմանված նպատակի լիարժեք կատարման համար:
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	2023-2024 ուստարի:

4) ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) *Ֆինանսական միջոցների ձեռքբերման նպատակով անհրաժեշտ է ամրապնդել գործընկերային հարաբերությունները ներդրողների հետ:*
2) *Պետական բյուջեից ստացված ֆինանսական միջոցները ծախսել նպատակային՝ ուղղելով ուսուցիչների մասնագիտական կարողությունների որակական բարելավմանը:*
3) *Ակտիվացնել ծնողների ներգրավվածությունը արտադպրոցական և ներդպրոցական միջոցառումների կազմակերպման և իրականացման հարցերում:*
4) *Իրատեսական նպատակների և գործողությունների սահմանում :*
5) *Նպատակների և գործողությունների համապատասխանությունը ռեսուրսներին:*
6) *Մարդկային, ժամանակային, ֆինանսական ռեսուրսների հնարավորինս արդյունավետ և իրատեսական օգտագործում:*
7) *Պարբերաբար հաշվետվությունների, մշտադիտարկումների, վերլուծությունների*

իրականացում:

8) *Խանգարող հանգամանքների բացահայտում և դրանց վերացում:*
9) *Մշտական համագործակցություն յուրաքանչյուր գործողության իրականացման պատասխանատու մարմինների հետ:*

5) ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇ
Կրթության որակի և առաջադիմության վրա ուսումնադաստիարակչական աշխատանքների ազդեցության գնահատման չափանիշները	• Պարբերաբար կատարել դասալսումներ: • Չափորոշիչների պահանջներին համապատասխան ուսուցման նպատակների սահմանում: • Նպատակների իրականացման ընթացիկ վերլուծություն և գնահատում: • Գնահատել և վերհանել սովորողների կրթական կարիքները՝ կիրառելով գնահատման տարբեր մեթոդներ, աղյուսակներ, փոխադարձ գնահատման սանդղակներ, ռուբրիկներ և այլն: • Գիտելիքների պարբերաբար ստուգում: • Սովորողների գիտելիքների ստուգման արդյունքների քանակական և որակական վերլուծություններ: • Ներդպրոցական մրցույթների կազմակերպման ձևով ստուգումներ: • Ուսումնադաստիարակչական աշխատանքների

	հաջողված փորձերի վերլուծություն:
Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի գնահատման չափանիշները	• Գիտելիքի և արժեհամակարգի գնահատում և վերլուծություն: • Սովորողների առաջադիմության վերլուծություն: • Բռնության դեպքերի քանակի և բնույթի վերլուծություն: • Հարցումներ սովորողների և ուսուցիչների շրջանում: • Յուրաքանչյուր ուսումնադաստիարակչական խնդրի, բռնության դեպքի նկատմամբ հետևողական աշխատանքների իրականացում: • Վերլուծել, համամեմատել և գնահատել սովորողների մասնակցությունը ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումներին • Գնահատել սովորողների բազմակարծիք, ներառականշ և մասնակցային որակների զարգացման և խթանման արդյունավետությունը ուսումնական գործընթացում: • Գնահատել մասնակցային սկզբունքի հիման վրա իրականացրած կառավարման արդյունքները: • Գնահատել դպրոցի կառավարման թափանցիկությունը ինչպես ծնողների, այնպես էլ այլ շահառու մարմինների համար տարբեր մեթոդների կիրառմամբ՝ էլեկտրոնային հարցաթերթիկներ, գնահատման սանդղակներ և այլն:
	•Անհրաժեշտ կարիքների գնահատում: •Ուսուցիչների կատարած աշխատանքների արդյունավետության վերլուծություն:

Աշխատակազմի արժեորման, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ձևավորման գնահատման չափանիշները	•Ինքնակրթության, վերապատրաստումների արդյունքում ստացած հմտությունների կիրառելիության արդյունավետության գնահատում: • Գնահատել և վերլուծել աշխատակազմի արժեորման և խրախուսման միջոցառումների արդյունքները • Վերլուծել վերապատրաստումների մասնակցության արդյունքները, դրանց համապատասխանությունը կարիքներին, ուսումնական գործընթացի արդյունավետության վրա, առկա խնդիրների լուծման համար: •Իրականացնել անանուն հարցումներ և գնահատումներ աշխատակազմի արժեորման, կարիքների բացահայտման և իրականցրած գործունեության արդյունքների վերլուծության նպատակով:
Դպրոց-համայնք կապերի, ծնողական համայնքի, գործընկերների հետ համագործակցության, արտադպրոցական և երկարօրյա ուսուցման	• Վերլուծել և գնահատել դպրոց-համայնք համագործակցության արդյունքները : • Վերլուծել իրականցրած միջոցառումների արդյունավետությունը՝ դպրոցի մասնակցությունը համայնքի կյանքում և համայնքի մասնակցությունը դպրոցի գործունեության ընթացքում: • Գնահատել համագործակցությունների արդյունքները , դրանց ազդեցությունը դպրոցի և ուսումնադաստիարակչական գործընթացների վրա: • Գնահատել ծնողական համայնքի իրականացրած գործունեության արդյունավետությունը առկա խնդիրների լուծման ընթացքում:

գնահատման չափանիշներ	• Իրականացնել հետադարձ կապ համագործակցող կառույցների հետ: • Գնահատման չափանիշների սանդղակով պարբերաբար գնահատել արտադպրոցական և երկարօրյա ուսուցման իրականացումը:
Հալածանքի, օտարման և բռնության կանխարգելման գնահատման չափանիշները	• Գնահատել դպրոցի բարոյահոգեբանական միջավայրը • Վերհանել բացասական ազդեցություն ունեցող հանգամանքները • Կանխարգելել ստեղծված անառողջ փոխհարաբերությունները, անկախ դրանցում մասնակցող անձանցից: • Անանուն հարցաթերթիկների, կլոր սեղանների , գնահատման սանդղակների միջոցով պարզել, հալածանքի, օտարման, բռնության դեպքերը, դրանցում մասնակցություն ունեցող անձանց և դրդապատճառները: • Պարբերաբար իրականացնել իրազեկման սեմինարներ բռնության, հալածանքի կանխարգելման նպատակով և խաղային միջավայրում վերհանել նման դեպքերը: • Վերլուծել և գնահատել համագործակցության արդյունքները, կատարված միջոցառումների արդյունավետությունը, ծնող-դպրոց կապի արդյունավետությունը:

6) ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագրի գնահատումն ու վերահսկումը կատարվելու է ծրագրի գործողություններով պլանավորված և իրականացված արդյունքների վերլուծության և համեմատման գործընթացո : Վերջինիս անմիջական մասնակիցը պետք է լինեն, բոլոր պատասխանատու անձիք, ովքեր մասնակցելու են զարգացման ծրագրով նախատեսված նպատակների իրականացմանն ուղղված գործողություններին:

Զարգացման ծրագրում նախատեսված աշխատանքները պետք է հանդիսանան տարեկան աշխատանքային պլանի բաղադրիչ և իրագործվեն երկար կամ կարճ ժամանակահատվածներում: Զարգացման ծրագիրը ենթակա է փոփոխման՝ ըստ անհրաժեշտության:

Յուրաքանչյուր բաղադրիչի համար պետք է կազմվեն համապատասխան հաշվետվության ձևեր և ներկայացվեն ներքին գնահատման արդյունքներում:

Ձև 1

N	Միջոցառում/ գործողություն	Արդյունք	Սահմանված ժամանակ	Պատասխանատուներ	Նշումներ

Ձև 2

N	Սովորողների թիվը	Ավարտական քննություններում գերազանց գնահատականները ստացածների քանակը	Ավարտական քնությունների միջին գնահատական	Ձեռքբերումներ տարբեր օլիմպիադաներում

Ձև 3

N	Ուսուցիչների քանակը	Պարտադիր ատեստավորման մասնակցել են՝	Կամավոր ատեստավորման մասնակցել են՝	Տարբեր վերապատրաստումների մասնակցել են

Չև 4

N	Միջոցառումը	Սովորողների մասնակցությամբ կազմակերպված	Ուսուցիչների համագործակցությամբ կազմակերպված	Այլ կառույցների հետ համագործակցության արդյունքում

Չև 5

N	Հատկացված Ֆինանսական միջոցներ	Սովորողների ուսումնառության նպատակով ծախսված	Ուսուցիչների մասնագիտական որակների զարգացման նպատակով ծախսված	Դպրոցի շենքային պայմանների վրա ծախսված

Այսպիսով՝ 2023-2028 թվականների զարգացման ծրագրում տեղ գտած բոլոր դրույթներն իրատեսական են, իրագործելի, վերջնարդյունքները՝ չափելի: Զարգացման ծրագիրը միտված է պահպանելու նախկինում ունեցած բոլոր ձեռքբերումները և դրանք կատարելագործելու և լրացնելու:

«Վանաձորի Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի անվան թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ն ունի արդեն ձևավորված և կայացած պատմություն, որը կնպաստի զարգացման ծրագրի իրագործմանը:

Տնօրենի պաշտոնի հավակնորդ Աննա Զուլոյան